ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 176

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 29-Ն որոշման 2-րդ կետի պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները

հավելվածի ծախսային մաս

1. 01.01.01.51 Սոլակի համայնքապետարանի ծրագրի 4111 հոդվածի<<23 184 100 դրամ>> թվերը փոխարինել <<22 573 100 դրամ>> թվերով

2. 06.04.01.51 Սոլակի փողոցային լուսավորություն ծրագրի 4267 հոդվածի<<1 193 000 դրամ>> թվերը փոխարինել <<1 804 000 դրամ>> թվերով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2021 թ. 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 177

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հանգուցյալ Հայաստան Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և տնամերձ հողամասին /կադաստրային ծածկագիր 07-060-0027-0009/ տրամադրել հետևյալ հասցեն՝ Կոտայքի մարզ Սոլակ համայնք 8-րդ թաղամաս 68:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2021 թ. 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 094611991, solak.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 178

ԳԵՎՈՐԳ ՋԱՔԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ՋՈՒԳԱՐԱՆԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22 կետերի, 18-րդ կետի գ ենթակետի պահանջներով , հիմք ընդունելով իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 8-րդ թաղամաս 68 հասցեի հողամասում 1959 թվականին ինքնակամ կառուցված S=222,1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 1959 թվականին ինքնակամ կառուցված S=110,03 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 1959 թվականին ինքնակամ կառուցված S=55,34 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 2002 թվականին ինքնակամ կառուցված S=3,52 քմ արտաքին մակերեսով զուգարանը և 1959 թվականին ինքնակամ կառուցված S=0,76 քմ արտաքին մակերեսով պարիսպը օրինականացնելու մասին Գևորգ Զաքարյանի դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, <<ՊԻՌԱՄԻԴԱ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի, ինքնակամ կառույցի պահպանումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գևորգ Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող 07.060.0027.0009 ծածկագրում գտնվող հողամասում 1959 թվականին ինքնակամ կառուցված S=222,1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 1959 թվականին ինքնակամ կառուցված S=110,03 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 1959 թվականին ինքնակամ կառուցված S=55,34 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 2002 թվականին ինքնակամ կառուցված S=3,52 քմ արտաքին մակերեսով զուգարանը և 1959 թվականին ինքնակամ կառուցված S=0,76 քմ արտաքին մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ S=3,52 քմ արտաքին մակերեսով զուգարանը կառուցվել են 2002 թվականին,ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 2 560 ՀՀ դրամ :

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար վճարների 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2021 թ. 20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
գ.Սոլակ